առաքինությունն է: Այսպես էր նաև մեծամասնության մեջ այն մյուս մեծանուն գրագետներուն, որոնց ազգասիրության մեկ գերազանց ապացույցն իրենց լայն ու խորին տիրացումն է լեզվին, անոր անցյալն ու ներկան միանգամայն ընդգրկող»: Այս ամենով հանդերձ, ինչպես հաստատում են նաև երկու բանախոսներն էլ, նոր սերնդի համար Սեթյանի գործը մնում էր գեղեցիկ ավանդույթի իր արժեքի մեջ: 10-ական թվականների գրական բուռն որոնումների օրերին նա, ինչպես և Զոհրապը, շարունակում էր ստեղծագործել: Բայց եթե անվանի նովելագիրը դեռ կարող էր իր որոշակի նպաստը բերել նոր շարժմանը, ապա Հ. Սեթյանն իր լեզվով ու մտածողությամբ, թեմաներով ու իդեալներով արդեն անվերադարձ անցյալին էր պատկանում: Եվ ասուլիների բանախոսները հստակ ու որոշակի վավերացնում են այդ փաստը:

***

Բոլոր դեպքերում, սակայն, ասուլիսների հիմնական թեման ընթացիկ գրական կյանքն էր՝ իր ամենանշանակալից երևույթներով: Այդ բազմամարդ հավաքույթների գլխավոր նպատակը հայ հոգևոր վերածնության կենդանի ուժերի արթնացումն ու խթանում էր, միտում, որ ուղղակիորեն կամ անուղղակի դրսևորվում է գրեթե բոլոր բանախոսների ելույթներում: Դա առանձնապես ցայտուն երևում է Ռ. Զարդարյանի «Ցայգալույսին» նվիրված ասուլիսում:

Զարդարյանի ստեղծագործությունն առհասարակ մեր գրականագիտության մեջ ամենից ավելի քիչ ուսումնասիրված երևույթներից է, ուստի այդ ստեղծագործության մասին ասուլիսում արտահայտված տեսակետները այսօր էլ պահպանում են իրենց գիտական նշանակությունը, մանավանդ որ բանախոսները արևմտահայ հոգևոր շարժման ամենաականավոր ներկայացուցիչներից էին՝ Զ. Եսայան, Ե. Սրմաքեշխանլյան (Երուխան), Կոմիտաս և ուրիշներ:

Զարդարյանի ստեղծագործությունն իր թեմատիկայով, գաղափարներով ու գեղագիտությամբ, մտածողությամբ, լեզվով ու ոճով կապված էր «գավառական» կոչված շարժման հետ: Ահա թե ինչու «Ցայգալույսին» նվիրված ասուլիսը վերածվում է նաև գավառական գրականության յուրօրինակ հանդիսության. ավելի քան մեկ տասնամյա վաղեմություն ունեցող գաղափարները